ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ---------- 2023 թվականի N---Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 25-ի N516Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) 240-րդ կետի համաձայն՝ երաշխավորված մատակարարը պարտավոր է իրեն առաքված կամ իր կողմից գնված էլեկտրական էներգիայի դիմաց վճարումները կատարել մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը,

բ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված՝ 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով լրացված՝ Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ հավելվածի «Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման (երաշխավորված մատակարարի) լիցենզիա ունեցող անձի կողմից գնված էլեկտրական էներգիայի (հզորության), ստացված ծառայությունների և դրանց դիմաց վճարումների վերաբերյալ» N2-8 և 2022 թվականի սեպտեմբեր ամսվա արդյունքներով լրացված՝ Հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի N313Ա որոշմամբ հաստատված «Հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի վերաբերյալ» տեղեկատվական ձևերում արտացոլված ցուցանիշների վերլուծության և համադրության արդյունքում պարզ է դարձել, որ Ընկերությունը 2022 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը չի վճարել «Ամբերդ ՀԷԿ-1», «Ամբերդ ՀԷԿ-2» և «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայաններից 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման

ենթակա՝ ընդհանուր 26 194 094 (քսանվեց միլիոն հարյուր իննսունչորս հազար իննսունչորս) դրամ գումարը,

գ) Հանձնաժողովը ԷՄՇ կանոններով սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով 2022 թվականի հոկտեմբերի 21-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 21-ի ՈԳԲ/34.4-Ղ4-2/3703-2022 գրությամբ,

դ) Ընկերությունը 2022 թվականի դեկտեմբերի 13-ի ՈԵ-1266-22 գրությամբ ըստ էության նշել է, որ «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը 2022 թվականի սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում վճարումներ չեն իրականացվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ վերջինս ստանձնել էր երաշխավորություն երրորդ անձանց հետ հարաբերություններում առաջացող պարտականությունների կատարման ապահովման համար: Մասնավորապես, Ընկերության ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ երաշխավորության պայմանագրով, որպես ապահովման միջոց, սահմանվել էր Ընկերության նկատմամբ «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ունեցած պահանջի իրավունքի զիջումը՝ երրորդ անձանց միջև կնքված պայմանագրից բխող պարտավորության խախտման դեպքում: Ընկերությունը հավելել է նաև, որ 2022 թվականի նոյեմբերի 2-ին կողմերի միջև կնքվել է պայմանագրի կատարման ժամկետի երկարաձգման համաձայնագիր, որի ուժով կատարման ժամկետներն այլևս խախտված չեն համարվել, և վերացել են պահանջի զիջման ու դրա հիման վրա «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գումար չվճարելու հիմքերը, ինչի արդյունքում, Ընկերությունը վճարել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը չվճարված գումարները,

ե) Ընկերության կողմից Հանձնաժողով ներկայացված՝ 2022 թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների արդյունքներով լրացված՝ Հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի N308Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ հավելվածի «Էլեկտրական էներգիայի (հզորության) բաշխման (երաշխավորված մատակարարի) լիցենզիա ունեցող անձի կողմից գնված էլեկտրական էներգիայի (հզորության), ստացված ծառայությունների և դրանց դիմաց վճարումների վերաբերյալ» N2-8 և 2022 թվականի նոյեմբեր ամսվա արդյունքներով լրացված՝ Հանձնաժողովի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի N313Ա որոշմամբ հաստատված «Հատուկ հաշիվներում դրամական միջոցների շարժի

վերաբերյալ» տեղեկատվական ձևերի վերլուծության և համադրության արդյունքում պարզ է դարձել, որ Ընկերությունը «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ամբերդ ՀԷԿ-1», «Ամբերդ ՀԷԿ-2» և «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայաններից 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա 26 194 094 (քսանվեց միլիոն հարյուր իննսունչորս հազար իննսունչորս) դրամ, 2022 թվականի սեպտեմբեր ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա 23 118 925 (քսաներեք միլիոն հարյուր տասնութ հազար ինը հարյուր քսանհինգ) դրամ, ինչպես նաև 2022 թվականի հոկտեմբեր ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա 27 273 936 (քսանյոթ միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար ինը հարյուր երեսունվեց) դրամ գումարները, ընդհանուր՝ 2022 թվականի օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց վճարման ենթակա՝ 76 586 955 (յոթանասունվեց միլիոն հինգ հարյուր ութսունվեց հազար ինը հարյուր հիսունհինգ) դրամի չափով, «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վճարել է 2022 թվականի նոյեմբերի 21-ին,

զ) Հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է ԷՄՇ կանոնների 240-րդ կետով սահմանված պահանջը: Մասնավորապես, հիշյալ կետի համաձայն՝ «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ամբերդ ՀԷԿ-1», «Ամբերդ ՀԷԿ-2» և «Ամբերդ ՀԷԿ-3» փոքր հիդրոէլեկտրակայաններից 2022 թվականի օգոստոս ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց Ընկերությունը պարտավոր էր վճարել մինչև 2022 թվականի սեպտեմբերի 25-ը, իսկ 2022 թվականի սեպտեմբեր ամսվա արդյունքներով առաքված էլեկտրական էներգիայի դիմաց՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 25-ը: Այնինչ, Ընկերությունը վերը նշված գումարները «ԱՄԲԵՐԴ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վճարել է 2022 թվականի նոյեմբերի 21-ին: Ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում Ընկերության ներկայացրած հիմնավորմանը, ապա հարկ է նշել, որ հաշվետու ամսվա ընթացքում առաքված էլեկտրական էներգիայի դիմաց մինչև հաջորդող ամսվա 25-ն Ընկերության կողմից վճարումների իրականացման պահանջն ամրագրված է Հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտով և հանդիսանում է հանրային իրավական պահանջ, հետևաբար պարտադիր է Ընկերության համար: Ինչպես նշված, այնպես էլ ԷՄՇ

կանոններով ամրագրված մյուս դրույթները կաշկանդում են քաղաքացիաիրավական պայմանագրի կողմերին, քանի որ կողմերը տվյալ հարաբերության բովանդակությունը որոշելու հարցում օժտված չեն ազատ կամահայտնությամբ: Հետևաբար, ԷՄՇ կանոնների հիշյալ իրավակարգավորումը չի կարող շրջանցվել կողմերի միջև մասնավոր քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակում կնքված գործարքի միջոցով: Ընդ որում, Ընկերությունը Հանձնաժողով չի ներկայացրել նաև իր փաստարկները հիմնավորող փաստաթղթերը: Իսկ ինչ վերաբերում է վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից վկայակոչված՝ Հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի N456Ն որոշման հավելվածի՝ բաշխման ցանցին կառուցվող (վերակառուցվող) կայանի միացման, կարգաբերման-գործարկման աշխատանքների ընթացքում էլեկտրական էներգիայի առաքման և էլեկտրական էներգիայի առուվաճառքի (օրենքով գնման երաշխիք ունեցող մինչև 30 ՄՎտ տեղակայված հզորությամբ կայանում էլեկտրական էներգիա արտադրող-բաշխող (երաշխավորված մատակարար)) պայմանագրի օրինակելի ձևի 36-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված՝ նույն պայմանագրով ամրագրված իրավունքները զիջելու (այդ թվում՝ գրավադրելու միջոցով) մասով արտադրող կայանի իրավունքին, ապա անհրաժեշտ է նշել, որ ԷՄՇ կանոնների 240-րդ կետով սահմանված՝ գնված էլեկտրական էներգիայի և իրեն մատուցված ծառայությունների դիմաց Ընկերության կողմից մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը վճարումների կատարման պարտավորությունը պայմանավորված չէ էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող և ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից Ընկերությանը ներկայացված՝ գումար վճարելու պահանջով: Այսինքն, ԷՄՇ կանոնների 240-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ամսվա արդյունքներով գնված էլեկտրական էներգիայի և իրեն մատուցված ծառայությունների դիմաց Ընկերությունը պարտավոր է մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը կատարել համապատասխան վճարումներ՝ անկախ էլեկտրաէներգե-տիկական համակարգի արտադրող և ծառայություններ մատուցող ընկերությունների կողմից Ընկերությանն այդ մասով գումարի վճարման պահանջ ներկայացնելու փաստից: Վարչական վարույթի շրջանակում Հանձնաժողովն իր կողմից իրականացվող կարգավորման գործառույթների շրջանակում առաջնահերթ դիտարկում է կարգավորվող անձանց կողմից իր իրավական ակտերի պահանջների անվերապահ կատարման ընթացքը: Ընկերության կողմից գնված էլեկտրական էներգիայի և իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարումների կատարման վերջնաժամկետն ԷՄՇ կանոնների 240-րդ կետով սահմանվել է մինչև յուրաքանչյուր ամսվա 25-ը՝ հիմքում ունենալով այն, որ

Ընկերությունն այդ գումարները վճարում է Հանձնաժողովի համապատասխան իրավակարգավորումներով սահմանված ժամկետներում սպառողներից հավաքագրված գումարներից: Այսինքն, Ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերություններին վճարումների կատարման գործառույթը մաս է կազմում «էլեկտրական էներգիայի արտադրություն–հաղորդում (փոխադրում)–ծառայությունների մատուցում-էլեկտրական էներգիայի բաշխում (մատակարարում) սպառողներին–սպառողներից գումարների հավաքագրում-վճարումներ համակարգի ընկերություններին» գործառնական շղթայի, որի անխափան աշխատանքով է նաև պայմանավորված էլեկտրաէներգետիկական համակարգի ֆինանսական կայունությունը, համակարգի ընկերությունների անընդհատ և շարունակական գործունեությունը: Հետևաբար, Ընկերության կողմից նշվածը՝ գնված էլեկտրական էներգիայի և իրեն մատուցված ծառայությունների դիմաց վճարումների չկատարման կամ ԷՄՇ կանոններով սահմանված ժամկետի խախտմամբ կատարման հիմնավոր պատճառ չի կարող հանդիսանալ, և

հիմք ընդունելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, «Էներգետիկայի մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԷՄՇ կանոնների 240-րդ կետով սահմանված ժամկետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ.ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2023թ.